ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N224-Ա
« 23 » ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023Թ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ «ՎԱՅՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ՀՈՎԻԿ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ՀԱՅԱՐՓԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» թիվ 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ, 5-րդ, 6-րդ կետերով, հիմք ընդունելով Հովիկ Մնացականյանի դիմումը և նրա հետ կնքած 2018 թվականի նոյեմբերի 1-ի N395 աշխատանքային պայմանագրի 6-րդ բաժնի 6.1 կետի «գ» ենթակետը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2023 թվականի հոկտեմբերի 24-ից ՀՀ Վայոց ձորի մարզի «Վայքի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Հովիկ Մնացականյանի լիազորությունները դադարեցնել՝ լուծել նրա հետ կնքած 2018 թվականի նոյեմբերի 1-ի N395 աշխատանքային պայմանագիրը:
2. 2023 թվականի հոկտեմբերի 24-ից ՀՀ Վայոց ձորի մարզի «Վայքի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունների կատարումը դնել նույն դպրոցի ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ Հայարփի Մարգարյանի վրա:
3. ՀՀ Վայոց ձորի մարզի «Վայքի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
4. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել հաստատության նյութական պատասխանատու անձանց:
5. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Signed by: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ք.Եղեգնաձոր

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2023թ հոկտեմբերի 23-ի
N -Ա որոշման

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ «ՎԱՅՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝

Հարությունյան Հուսիկ	ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ

Անդամներ՝

Մաղաքյան Նարինե	ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ
Սաֆարյան Աննա	ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր տնտեսագետ